

## ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ռ ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Եղնիկի համայնքում կառուցվող ջրագծի շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Եղնիկի համայնքին սուբվենցիա տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանին Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2016 թվականի առաջին կիսամյակում հատկացնել 6,000.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով):

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշման N 11 հավելվածի NN 11.50 և 12 աղյուսակներում կատարել լրացումներ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

[Հավելված](#)

**Հովիկ Աբրահամյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ  
 N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.50 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Չափորոշիչներ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)					
	ոչ ֆինանսական ցուցանիշներ			ֆինանսական ցուցանիշներ		
	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի
<b>ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները</b>						
<b>1.2. Տրանսֆերտներ</b>						
Ծրագրային դասիչը		<u>Անվանումը</u> Աջակցություն ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներին՝ ջրային տնտեսության ոլորտի վերականգնման և շինարարական աշխատանքների իրականացման նպատակով				
1047	ԾՏ39	<u>Նկարագրությունը</u> Աջակցություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Եղնիկի համայնքում կառուցվող ջրագծի շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով				
Շահառուների քանակը		Համայնքների թիվը, որտեղ կատարվում են ներդրումները	1	1	1	

Գումարը (հազ. դրամ)		x	x	6,000.0	6,000.0	6,000.0
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը						
<u>Շահառուների ընտրության չափանիշները</u>						
Համայնքի սոցիալական խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը						
<u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u>						
1047 Աջակցություն համայնքային, միջհամայնքային, ոչ կառավարական, մասնավոր և այլ կազմակերպություններին ու անհատներին						
<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>						
Համայնքներում կյանքի ստանդարտների բարելավում						

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ  
 N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան

Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (բաժինը/խումբը /դասը)	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)
ծրագիրը	միջոցառումը			ՀՀ 2016 թվականի պետական բյուջե (հազ. դրամ)
1047			ԾՐԱԳԻՐ	
			Աջակցություն համայնքային, միջհամայնքային, ոչ կառավարական, մասնավոր և այլ կազմակերպություններին ու անհատներին	6,000.0
			<u>Ծրագրի նկարագրությունը</u> Աջակցություն՝ ՀՀ համայնքներին համայնքային օբյեկտների շենքային պայմանների բարելավման նպատակով	
			<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u> Համայնքներում կյանքի ստանդարտների բարելավում	

		Քաղաքականության միջոցառումներ. Տրանսֆերտներ	
	ԾՏ39	Աջակցություն ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներին՝ ջրային տնտեսության ոլորտի վերականգնման և շինարարական աշխատանքների իրականացման նպատակով	6,000.0
		Տրանսֆերտի նկարագրությունը Աջակցություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Եղնիկի համայնքում կառուցվող ջրագծի շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ